ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ՀԲՄ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

20.11.2019թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ ՍՎ ԱԾ հաշվառման բաժնի պետ, գնդապետ Ս. Պետրոսյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիմոնյան,
ՀՀ ՋՈՒ ՍՎ ԱԾ շահագործման և պլանավորման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Դ. Սերոբյան:

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ Ա.Ամիրյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի (ՀԲՄ) ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Ամիրյան)

1. Մասնակցի՝ հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին.

(Ա. Ամիրյան)

1.1 «Դ-Լ 777 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն ներկայացրել է (կոնսորցիում «Հայգեր Բաս Քոմփանի Լիմիթիդ» ՍՊԸ-ի հետ) «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող հավելված №3-ը (ԴԻՄՈՒՄ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման), հավելված №3.1-ը՝ ապրանքի ամբողջական նկարագիրը, սակայն դրանք հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ: <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը հիմնավորող փաաստթղթերը ընդհանրապես չեն ներկայացվել: Մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում ևս առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

Հրավերով սահմանվել է՝ շարժիչի աշխատանքային ծավալը, 2.2-2.5 խմ, այնինչ մասնակցի կողմից առաջարկվել է 2.982:

Հրավերով սահմանվել է՝ ընդհանուր երկար./լայն./բարձր., մմ 6704/2474/2746+3%, այնինչ մասնակցի կողմից առաջարկվել է 5995/2380/2645:

Հրավերով սահմանվել է՝ շրջադարձի տրամագիծը, մ 13.3 +3%, այնինչ մասնակցի կողմից առաջարկվել է 14.1:

Հրավերով սահմանվել է՝ վառելիքի ծախս (մայրուղային ցիկլում), լ/100կմ 8.0-8.5, այնինչ մասնակցի կողմից առաջարկվել է 8.7:

Հրավերով սահմանվել է՝ վառելիքի ծախս (խառը ցիկլում), լ/100կմ 9.3-10, այնինչ մասնակցի կողմից առաջարկվել է 10.6:

Հրավերով սահմանվել է՝ հետևի դռների բացվածքը 1800, աջակողմյան սլացիկ դռան առանց սահմանափակման բացվածքով, իսկ մասնակցի կողմից դրանց մասին տեղեկատվությունը ընդհանրապես չի ներկայացվել:

Հրավերով սահմանվել է՝ հագեցվածություն՝ ABS, ESP, EBL, EBA, ROM, GVM համակարգերով, այնինչ մասնակցի առաջարկում բացակայում են EBA, ROM, GVM համակարգերը:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

Հաշվի առնելով վերը նշված անահամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը 20.11.2019թ. որոշեց նիստը երեք աշխատանքային օրով կասեցնել և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է շտկումներ, սակայն դրանք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ծակագրով ընթացակարգի հրավերի պահանջներին չհամապատասխանող, քանի որ հավելվածներ №3-ը (ԴԻՍՈՒՄ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման) և №3.1-ը՝ ապրանքի ամբողջական նկարագիրը, հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Իսկ <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են թերի, մասնավորապես «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ծակագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.5 կետի 1-ին ենթակետի համաձայն

1) <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում ավտոմեքենաների մատակարարված լինելը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի (համաձայնագրի) կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընդ որում գնահատող հանձնաժողովը կարող է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված պայմանագրի (համաձայնագրի) կատարված լինելու իսկությունը ստուգել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի միջոցով:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

Սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետի համաձայն՝ սույն հրավերով նախատեսված՝

1) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

ա. իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 3.1-ի.

բ. հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Այսպիսով, «Դ-Լ 777 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (կոնսորցիում «Հայգեր Բաս Քոմփանի Լիմիթիդ» ՍՊԸ-ի հետ) կողմից ներկայացված հավելվածներ №№3-ը և 3.1-ը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերում բացակայում են պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանձնաժողովը 27.11.2019թ. որոշեց մերժել «Դ-Լ 777 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (կոնսորցիում «Հայգեր Բաս Քոմփանի Լիմիթիդ» ՍՊԸ-ի հետ) հայտը:

1.2 «Դ-Լ 777 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (կոնսորցիում «Հայգեր Բաս Քոմփանի Լիմիթիդ» ՍՊԸ-ի հետ) հայտը մերժելու արդյունքում ներկայացված գնային առաջարկի հիման վրա հանձնաժողովի 27.11.2019թ. որոշմամբ ընթացակարգում 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվեց «Կարկոմավտո» ՍՊԸ-ն: Հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած

մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել ոչ ուշ քան 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Տ. Մաթևոսյան
Գնահատող	Ս. Պետրոսյան
Գնահատող	Ա. Սիմոնյան
Գնահատող	Դ. Սերոբյան
Գնումները համակարգող՝	Ա. Ամիրյան